




**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«17» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-12/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի 02.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

**1. «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները
և պահանջը**

«Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 02.02.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով գնման ընթացակարգին և նույն ընթացակարգի երկրորդ չափաբաժնի մանկական զգեստապահարան ապրանքի մասով

ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն ներկայացնելով ամենացածր գինը:

Ընկերությունն, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու վերաբերյալ, ծանուցվել է, և ծանուցումից հետո ներկայացրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, հույս ունենալով որ կճանաչվի արդեն հաղթող մասնակից:

Ընկերությունը կարծում է, որ «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը՝ հանձինս Երևանի քաղաքապետարանի, կատարել է սխալ, մերժելով Ընկերությանը գնային առաջարկը երկրորդ չափաբաժնի մասով, ինչի կատարած գործողությունների և անգործության արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30 և 31-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի հ. 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության դրույթը:

«Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ն նաև տեղեկացրել է, որ Ընկերության և «Էդգար Հովհաննիսյան» Ա/Ձ-ի գնային առաջարկների տարբերությունը կազմում է մոտավորապես 1.105.000 դրամ, իսկ այդ ժամանակ պետական բյուջեն կրում է ավելորդ ծախսեր:

Ընկերությունը իր խախտված իրավունքը վերականգնելու համար դիմում է Գնումների բողոքարկման խորհրդին և վերջինիս խնդրում է դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. ժամը 09:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և Էդգար Հովհաննիսյան Ա/Ձ-ին 2-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Ընկերությունը՝ ԳԲԽ-12/17 բողոքի քննարկման նիստի ժամանակ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 31.01.2017թ. տրամադրվել է միայն 2014թ և 2015թ.-ների համախառն եկամտի հանրագումարը, իսկ 2016թ.-ի համախառն եկամտի հանրագումարը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից չի ներկայացվել:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 03.02.2017թ. թիվ 01/04-1/319-17 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին և խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ 26.01.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 31.01.2017թ. տրամադրել է հարցման մասին եզրակացություն, որի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտների հանրագումարը կազմում է 35,493,829 ՀՀ դրամ, իսկ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը 48,690,000 ՀՀ դրամ:

Պատվիրատուն տրամադրել է վերը նշված Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 08.02.2017թ. ժամը 16:45-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-12/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-12/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար /մանկական զգեստապահարան/ ապրանքի մասով ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 25.01.2017թ. հայտ է ներկայացրել նաև «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ն:

2. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար /մանկական զգեստապահարան/ ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով Ընթացակարգի հրավերի 2.3 կետի համաձայն՝

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն,
- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում Մասնակցի՝

(...)

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.4**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

(...)

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

(...)

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:» (...):

3. «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 25.01.2017թ. ներկայացրած հայտի թիվ 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

4. «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 25.01.2017թ. ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկ, որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումար, ներկայացրել է **48,690,000 ՀՀ դրամ:**

5. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 26.01.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել եզրակացություն «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ -ի վերաբերյալ:

6. Ի պատասխան Պատվիրատուի կողմից 26.01.2017թ. կատարված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 31.01.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի ներկայացվել է «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի **2014թ.** և **2015թ.**-ների համախառն եկամուտի հանրագումարները (2014թ.-23,524,196, 2015թ.-11,969,633):

7. «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) կողմից 01.02.2017թ. ժամը 09:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

8. Կենտրոնը 09.02.2017թ. թիվ 01/04.1/399-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ, խնդրել հայտնել՝ «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի 25.01.2017թ (Երևանի քաղաապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) նախորդող՝ 3 (երեք) հաշվետու տարիների (2014թ., 2015թ., 2016թ.) համախառն եկամտի հանրագումարը:

9. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված 17.02.2017թ. թիվ 1/6-1/5143-17 գրության համաձայն՝ «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է **55,175,948 ՀՀ դրամ /2014թ.՝ 23,524,196 ՀՀ դրամ, 2015թ.՝ 11,969,633 ՀՀ դրամ, 2016թ.՝ 19,682,119 ՀՀ դրամ/:**

4. ԳԲԽ-12/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը և կից

փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում ատարելու ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգը), ՀՀ ԿԱ ՊԵԿ 17.02.2017թ. թիվ 1/6-1/5143-17 գրությունը, գտնում է, որ «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նույն Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝

«Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

(...)

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

(...)

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները»:

«Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 25.01.2017թ. ներկայացրած հայտի թիվ 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից (գնային առաջարկ՝ **48,690,000 ՀՀ դրամ**):

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 26.01.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել եզրակացություն «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ -ի վերաբերյալ:

Ի պատասխան Պատվիրատուի կողմից 26.01.2017թ. կատարված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 31.01.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի ներկայացվել է «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի **2014թ.** և **2015թ.**-ների համախառն եկամուտի հանրագումարները (2014թ.-23,524,196, 2015թ.-11,969,633):

Կենտրոնը 09.02.2017թ. թիվ 01/04.1/399-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ, խնդրել հայտնել՝ «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի 25.01.2017թ (Երևանի քաղաապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/56» ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) նախորդող՝ 3 (երեք) հաշվետու տարիների (**2014թ., 2015թ., 2016թ.**) համախառն եկամտի հանրագումարը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրած 17.02.2017թ. թիվ 1/6-1/5143-17 գրության համաձայն՝ «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է **55,175,948 ՀՀ դրամ** /2014թ.՝ 23,524,196 ՀՀ դրամ, 2015թ.՝ 11,969,633 ՀՀ դրամ, **2016թ.՝ 19,682,119 ՀՀ դրամ**/:

Այսպիսով, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրած 17.02.2017թ. թիվ 1/6-1/5143-17 գրության համաձայն, «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (գնային առաջարկ՝ **48,690,000 ՀՀ դրամ**, համախառն եկամտի հանրագումարը՝ **55,175,948 ՀՀ դրամ**): Այսինքն, Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի մասով բավարարում է հրավերի պահանջներին, հետևաբար Ընկերության հայտը այս հիմքով ենթակա չէ մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. ժամը 09:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և Էդգար Հովհաննիսյան Ա/Ձ-ին 2-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝
Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝




Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի պետ՝



Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-12/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Պարանյան